

ՎԱՐԺԱՐԱՆԸ

Այսօր, քեզ դռները եկայ յուզմամբ լի,
Ու ժամանակէն մաշած որմիդ յեց՝
Ձանդդ հնչեցուցի. Մենութիւնն ինծի
Գրնա՛ Քու գործին, մարդ չըկայ, հծծեց: —

Խեղճ էս կորուսեր, Մենութիւն բարի,
Ի՞նչպէս թէ չըկայ մարդ ու մարդասանք,
Ձե՞ս տեսներ, ի՞նչպէս սիրտս է թախծալի
Երբ կ'ողբեմ անցեալն, աս, ան՝ վանկ առ վանկ:

Ահ, մերոնցմէ՞ս էս, ըսաւ ան կրկին,
Ու հակած վըրաս՝ մնչեց զաղտարար, —
Այս գիշեր կ'ողբե՞ս ըլլանք միասին,
Երթանք Մեծ Ծառին տակ խօսինք երկար:

Քալենք թեւանցուի՝ լուսնակին տակ կոյս,
Յիշենք անցեալին հէքեաթն աննրման,
Երազին մէջէն աշխարհն անցնինք լոյս
Մանկութեան մեր ջինջ, խեղճ պատանութեան: —

Ձէ, սուրբ Մենութիւն, մոռնանք՝ սէրը մեր,
Ձի հետդ ըլլալն է ցաւ ու տառապանք,
Ձըկայ ոչ մէկ խոհ, յուշ կամ հըրաւէր
Որ քեզմով չըլլան ափսոս՝ա-ափսոսանք:

Այս ըսած՝ դացի չըջիւ քաղքին մէջ,
Տեսայ նոյն մայթերն, ջըրանցք ու գըռիհ,
Ու յուշերէ յուշ ինկած՝ էջ առ էջ
Գիրքը մանկութեան երկար կարդացի:

ՆԱՅԻՐԻ

Երկիր Նայիրի, երկիր կարօտի,
Դրբախտ կորուսեալ խեղճ Նախամարդուն,
Պատմութեան վիհէն խօսող աշխարհ դուն,
Երկիր Նայիրի, երկիր կարօտի:

Արաքս եւ Եփրատ, ճորոխ եւ Տիգրիս,
Աղթամար ու Լիմ, Վանայ լիճ ու հող,
Ո՛վ մեր Հայրերուն դուք դահ ոտնակոխ՝
Երկնքի զրկից փոքր ու մեծ Մասիս:

ՆՈՐԱՅԱՅՑ ԳԵՏ ԵՐԵՒԱՆԻ ՄԷՁ

Կանգնած ափին Հայպետհրատի, մենք յերեւան,
Կրնանք դիտել իր պերճընթաց հոսանքն ու թափ,
Ուր Բերդն Հայոց, Նարեկն անմահ, ափերէ ափ,
Վաքսուն հազար հատորներով կը ծփծրփան:

Եթէ այսպէս ջուրերն ուռին, ու միշտ տանին
Երեւանէն դէպի գիւղերն հայրենական
Միտքը Հայուն եղած Մատեան յորդահոսան՝
Ի՞նչ պիտ' ըլլայ համբաւն Արաքս մեր գլխոյին...:

Ձի մեր Արազն, առօրէ, հնչեղ, դարէ ի դար,
Գիտենք, ուրկէ կեանքն իր կ'առնէ, ո՛ւր կը հասնի,
Մինչ զեղումն այդ Հայպետհրատեան, անկասելի
Ծովածաւալ փարթամ Նեղոս մ'է բարերար:

Թող երկուքն ալ ձայնեն, հոսին ձորերէ ձոր,
Արաքսին մէջ Հայը սիրտն իր դարձնէ անվերջ,
Մինչ նորայայտ Հայպետհրատեան Նեղոսը պերճ՝
Միտքն ոռոգէ հեղումներովն իր նորանոր:

ՄՐԱՆՏԱՇ ԽԱՉԲԱՐԸ

Խաչքարն որձաքար Մայր էջմիածնայ
Կը տանիմ ահա դէպի Սուրբ Ղազար,
Բայց հաղիւ հասած քաղաքն ալեպար՝
Նաւերն են անշարժ, զի դորժաղուլ կայ:

Մասունքն առած էս, — տասնըչորս փիլոյ, —
Կեղերոնք քաղքին կը սկըսիմ դիմել,
Սրտիս մէջ կ'ելլեն, կ'իջնեն անարդել՝
Սարսուռներ պէսպէս յուզմանց եւ սիրոյ:

Կ'ըսենք՝ Խաչն է ծանր. ըսուածքն այս գեղո՞ւ,
Ձեմ հաստատած էս այնքան ճիշտ, տեղին,
Որքան այն օրն երբ խաչքար ի ձեռին՝
Հասայ Սուրբ Ղազար, կէս ոտքի, կէս ոչ...:

ԱՐԱՄԱՅԻՍ ՍՐԱՊԵԱՆ

Ծանօթ. Խմբ. — Ուրախ եմ հաղորդելու՝ որ մօտ օրերէն լոյս պիտի տեսնէ
Արամայիս Սրապեանի նոր ֆերքողագիրքը, Դարձեալ քեզի հետ, որուն մաս
կը կազմեն վերելի ոտանաւորները: